Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Թոթովենց փողոցից դեպի Թոթովենց թիվ 12 շենք բարձրացող աստիճանների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

30.01.2017թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հունվարի 30-ին, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
2	«Մառք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Թոթովենց փողոցից դեպի Թոթովենց թիվ 12 շենք բարձրացող աստիճանների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ					
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային արժեքը	Առաջարկած գինը			
		Ինքնարժեք	Շահույթ	Առանց ԱԱՀ	Ընդհանուր
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	18170	12600	1400	14000	14000

«Մառք» ՍՊԸ		16000	2000	18000	18000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Մառք» ՍՊԸ	Բավարար

5. Բաց ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Մառք» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 31.01.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 31.01.2016թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 06.02.2017թ. ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան